Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գեղանուշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականության(12 դասաժամ) ,դասվարի (1-ին դասարան 10 դասաժամ), դասվարի (4-րդ դասարան 9,5 դասաժամ), ինֆորմատիկայի (7 դասաժամ), երաժշտության (1 դասաժամ), կերպարվեստի (1 դասաժամ), տեխնոլոգիայի (աղջիկների խումբ 1,5 դասաժամ,) տեխնոլոգիայի (տղաների խումբ 2 դասաժամ,) ուսուցչի թափուր տեղ/երի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են **օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 5 -ը ներառյալ** , ամեն օր՝ ժամը 9՝00-ից 14՝00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. սեպտեմբերի 7-ին՝ ժամ 14:00-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Գեղանուշի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ Գեղանուշ, Վերին թաղ 4:

Տեղեկությունների համար զանգահարել (0285) 2-44-87, (077) 76-88-36 հեռախոսահամարով: